

**Հ Ր Ա Մ Ա Ն N 461-Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ**

«10» **ՍԵՊՏԵՄԲԵՐԻ** 2015 **Թ.**

**ՔԱՂ. ԵՐԵՎԱՆ**

**«ԿԵՆՏՐՈՆ» ՆՈՏԱՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՆՈՏԱՐ ԼԻՆԱ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ  
ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ «ԿԵՆՏՐՈՆ» ՆՈՏԱՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ  
ՆՈՏԱՐ ՏԱԹԵՎԻԿ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասով և 22-րդ հոդվածի 4-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության նոտարական պալատի նախագահ Հ. Հարությունյանի 2015 թվականի սեպտեմբերի 7-ի N ԵՆՊ-374/15 գրությունը, ինչպես նաև «Կենտրոն» նոտարական տարածքի նոտար Լ. Հովսեփյանի դիմումը.

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ**

1. «Կենտրոն» նոտարական տարածքի նոտար Լինա Հովսեփյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում 2015 թվականի սեպտեմբերի 16-ից 29-ը ներառյալ «Կենտրոն» նոտարական տարածքի նոտար Լինա Հովսեփյանի կողմից «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 58-63-րդ հոդվածներով նախատեսված նոտարական գործողություններ կատարելու, ինչպես նաև վավերացված գործարքներում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու կամ դրանք վաղակետ լուծելու լիազորությունները վերապահել «Կենտրոն» նոտարական տարածքի նոտար Տաթևիկ Սարգսյանին:



**ԱՐՓԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**